



ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

**5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը**

Ֆիզիկական անձ Գևորգ Գևորգյանի կողմից իրականացված վերը նշված ներմուծման գործարքի մասով հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի վճարվել ներմուծման ԱԱՀ-ի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանք(ներ)ի ձեռքբերման արժեքը:

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԱՀ-ն հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ **0.04 տոկոսի չափով**:

Հ/Հ	Ապրանքի ծածկագիր	Ապրանքի կոմերցիոն նկարագրություն	Հարկման բազա (ՀՀ դրամ)	Ներմուծման ԱԱՀ-ի գումար (ՀՀ դրամ)	Տույժ՝ 56օր (ՀՀ դրամ)
1	8464100000	СТАНОК ДЛЯ РЕЗКИ КАМНЯ Б/У	235,200	47,040	1,054
2	870829	АВТОЗАПЧАСТИ Б/У	88,246	17,649	395
<b>Ընդամենը</b>			<b>323,446</b>	<b>64,689</b>	<b>1,449</b>

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը առ 15/12/2021թ. դրությամբ կազմում է՝ **66,138 ՀՀ դրամ [64,689 + 1,449]**:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 15/12/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստաթղթերի առկայության և ներկայացման դեպքում:

**6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող՝ -**

**7.Ընդամենը՝ -**

**8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը**

ՀՀ ՊԵԿ ՀՏԻՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի հարկային տեսուչ



Վիոլա Աբրահամյան